

Մուրատի դեսպանութենէն մի քանի տարի յետոյ, երբ Ֆրանսական կառավարութիւնը անդրադարձաւ Եթովպիոյ հետ բարեկամութիւն մշակելու հարցին, նախապատրաստական աշխատութեանց համար Եզիան զրկեց Եթովպիայ Եզիան ներկայացաւ հապէշ թագաւորին և յաջողեցաւ համոզել զայն, որ պէտք եղած պատրաստութիւնները տեսնէ՝ ընդունելու համար Ֆրանսայի թագաւորին դեսպանը: Եզիա պիտի կատարէր թարգմանի պաշտօնը: Սակայն այս անգամ ալ յաջող արդիւնքի մը չհասաւ գործը, վասնզի Ֆրանչիսկեանները և զպտի կղերր դաւեցին: Դեսպան Պ. տիւ Ռուլ սպաննուեցաւ Ալնարի մահմետական իշխանէն: Եզիա, որ հապէշ թագաւորին կողմէ պաշտօն ունէր դեսպանը ընդունելու, այլեւս չդարձաւ Գահիրէ և մնաց Հապէշիստան, մինչև 1718: Յետոյ գնաց Մէքքէ. ուր հետքը կորսուեցաւ (Յ. Նալբանդեան, Արեւ, 22 Փետր. 1935):

Այդ օրերուն՝ եթովպական արքունիքին մէջ կային նաև հայ պաշտօնատարներ, որոնցմէ մէկն էր արաբկիրցի Սէլէֆ Ուստա, որ կայսեր գանձապետ եղած է: Իրեն յաջորդած է, 1662ին, իր որդին՝ Յովհաննէս Թոմաճան, իսկ այս վերջինին ալ իր որդին՝ Պօղոս:

Ասոնց ժամանակակից էր Յովաս կայսեր օրով (1753 — 1763) ամենասազդեցիկ դեր և դիրք ունեցող ուրիշ Հայ մը, — անունը չէ յիշուած, — որուն կեանքին և գործունէութեան մասին երկարօրէն խօսած է Պ. Յ. Նալբանդեան (Արեւ, 22 Փետր. 1935):

Այս ամէնը մեզ կը հասցնեն այն եզրակացութեան, թէ Եթովպիոյ մէջ Յովհաննէս Թիւթիւնճիի այցելութեան ատեն Հայեր կային ապահովաբար և զարմանալի է, որ հայ եպիսկոպոսը անոնց մասին